



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2011թ. առաջին եռամսյակում
իրականացված գործունեության
վերաբերյալ



2011

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ կողմից 2011թ. առաջին եռամսյակում իրականացված գործունեության վերաբերյալ

Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ինստիտուտ) գործունեությունն ընդգրկում է 4 հիմնական ոլորտներ՝ ստանդարտացման աշխատանքներ, համապատասխանության հավաստման, այդ թվում՝ կառավարման համակարգերի սերտիֆիկացման աշխատանքներ, լաբորատոր փորձարկումներ և ուսուցման կազմակերպում: Սույն հաշվետվությունն ընդգրկում է նշված ոլորտներում Ինստիտուտի կողմից 2011թ. հունվարի 1-ից մինչև մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացված գործունեությունը, Ինստիտուտի ինստիտուցիոնալ կառուցվածքի վերափոխումները և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը:

1. Ստանդարտացում

Առաջին եռամսյակում Ինստիտուտը «ՀՀ ստանդարտների մշակման ծառայությունների 2011 թվականի ծրագիրը» ուղարկել է բոլոր շահագրգիռ պետական մարմիններին՝ համաձայնեցման, որի արդյունքում շահագրգիռ մարմինների կողմից ուղարկված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա լրամշակվել է ստանդարտացման 2011 թվականի ծրագիրը և ներկայացվել ՀՀ էկոնոմիկայի նախարարին:

Ստանդարտացման ծրագրով նախատեսված **68** ստանդարտներից ներկայումս մշակվել է **41** ստանդարտ, որոնցից 13-ն ընդունվել և գործողության մեջ են դրվել, իսկ **28** ստանդարտների նախագծերը գտնվում են լրամշակման փուլում (մշակված է առաջին խմբագրությունը):

Շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցվել և իրականացվել է 34 միջազգային ստանդարտի և ստանդարտացման այլ փաստաթղթերի նախագծերի փորձաքննություն ու 34 էլեկտրոնային քվեարկություն:

2011թ-ի 1-ին եռամսյակում շարունակվել են ազգային ֆոնդի վերստուգման և ուսումնասիրության աշխատանքները, որոնց հիմնական նպատակն է հայտնաբերել արդիականությունը կորցրած միջպետական ստանդարտները (ՊՕՍ) և դադարեցնել դրանց գործողությունը ՀՀ տարածքում:

1-ին եռամսյակում ազգային ֆոնդի վերաստուգման և ուսումնասիրության արդյունքում առաջարկվել է ՀՀ-ում գործողությունը դադարեցնել 102 միջպետական ստանդարտ:

Ինստիտուտի համապատասխան մասնագետներ են ընդգրկվել «Ստանդարտացման մասին» և «Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքների նոր նախագծերի մշակման աշխատանքային խմբում:

Ինստիտուտի կողմից կարևորվում է բովանդակային գործունեությունը, ակտիվ մասնակցությունը միջազգային ստանդարտացման աշխատանքներին ԻՍՕ և ՍԵՆ կազմակերպությունների շրջանակներում: Ինստիտուտը գործունեություն է ծավալել միջազգային ստանդարտացման կառույցներում՝ ԻՍՕ-ում, ՍԵՆ-ում, ԴԵՎԿՕ-ում, Միջպետական խորհրդում (EASC) և այլն: Մասնավորապես, իրականացվել է մոտ 30 միջազգային ստանդարտների նախագծերի ուսումնասիրություն և դրանց գծով քվեարկություն: Աշխատանքներ են տարվում առկա ազգային կոմիտեների աշխատանքները ակտիվացնելու, ակտիվ քննարկումներ կազմակերպելու ուղղությամբ:

2011թ. 1-ին եռամսյակում ստեղծվել է երկու նոր ստանդարտացման տեխնիկական հանձնաժողով՝ ՏՀ 14 (ԻՍՕ/ՏՀ 207) «Շրջակա միջավայրի կառավարում» և ՏՀ 13 «Հեռահաղորդակցություն»: Ինստիտուտը վերակազմավորել է ՏՀ 2 «Միս, թռչնի միս, ձուկ, ձու և դրանց հիմքով արտադրանք» տեխնիկական հանձնաժողովը:

Ինստիտուտն իրականացրել է նախապատրաստական աշխատանքներ ՏՀ «Ճանապարհային տրանսպորտ», ՏՀ «Կոսմետիկա», ՏՀ «Որակի կառավարում և համապատասխանության հավաստում» տեխնիկական հանձնաժողովների ստեղծման համար:

Հաշվետու ժամանակահատվածում ստանդարտների ազգային ֆոնդը համալրվել է 266 միջազգային (ԻՍՕ), 229 Եվրոպական (ԵՆ), 14 միջպետական (ԳՕՍՏ), 167 Ռուսաստանի Դաշնության (ԳՕՍՏ Ռ) և 14 Հայաստանի Հանրապետության (ՀՍ) նոր ստանդարտներով: Ստանդարտների էլեկտրոնային տարբերակները արխիվացվել են, իսկ թղթի կրիչով ստանդարտները հաշվառման են վերցվել մատյանում:

Ստանդարտների ազգային ֆոնդի արդիականացման նպատակով 2011թ. առաջին եռամսյակում կատարվել է 195 միավոր ստանդարտի տեխնիկական մշակում (փոփոխություններ, լրացումներ, տեղեկություն չեղյալ հայտարարելու և փոխարինող ստանդարտների մասին) և վերաստուգում ըստ միջպետական ստանդարտի տեղեկատուի և գործող ԱՊՀ երկրների համար տեղեկատվական որոնման համակարգի:


Սպասարկման նպատակով 2011 թվականի 1-ին եռամսյակում իրականացրել է 54 ՀՀ կազմակերպությունների համար տեղեկատվական բաժանորդային սպասարկում ստանդարտացման և համապատասխանության բնագավառում: Հաշվետու

Ժամանակահատվածում կնքվել են 18 կազմակերպությունների հետ նոր բաժանորդային սպասարկման պայմանագրեր՝ **3.140.0 հազ. դրամի**:

Աբոնենտային տեղեկատվական սպասարկման արդյունքում կազմվել է 16 ակտ՝ **2.322.0 հազ. դրամի**, հետևյալ աշխատանքների մասին՝

- ✚ տեղեկատվության տրամադրում ազգային ֆոնդում միջազգային (ԻՍՕ, ԻԷԿ, ԵՆ), միջպետական (ԳՕՍՍ), Հայաստանի Հանրապետության (ՀՍՀ) և այլ երկրների (այդ թվում ԱՊՀ) ստանդարտների և այլ նորմատիվ փաստաթղթերի մասին,
- ✚ կազմակերպությունների ստանդարտների ֆոնդի արդիականացում,
- ✚ ՀՀ ստանդարտների ամենամյա կատալոգի, ստանդարտների և տեխնիկական պայմանների եռամսյակային տեղեկատուների տրամադրում,
- ✚ աբոնենտին անհրաժեշտ ազգային ստանդարտների անվճար տրամադրում (թվով 20),
- ✚ խորհրդատվություն ստանդարտացման և համապատասխանության հավաստման փաստաթղթերի վերաբերյալ:

Գծանկար 1. Ստանդարտացման բնագավառում ՀՀ կազմակերպությունների համար տեղեկատվական բաժանորդային սպասարկման գումարային դինամիկան 2010թ.-ի 1-ին եռամսյակի համեմատ, հազ. դրամ



Իրականացվել է նաև տեղեկատվական սպասարկում ՀՀ պետական կառավարման մարմիններին, բոլոր կազմակերպություններին, ֆիզիկական անձանց և ստանդարտների ազգային ինստիտուտի ստորաբաժանումների շուրջ **720** դիմողների համար: Նշված աշխատանքները իրականացվել են պետպատվերի շրջանակներում:

Կազմակերպվել է վճարովի ծառայություն՝ տեխնիկական պայմանների մշակման խորհրդատվություն, որի հիմնական նպատակն է օգնել միջին և փոքր ձեռնարկություններին և


անհատ ձեռնարկատերերին մշակել կոնկրետ տեսակի արտադրանքի համար տեխնիկական պայմաններ՝ համաձայն գործող նորմատիվ իրավական փաստաթղթերի և ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտների պահանջներին:

Կատարվել են շուրջ 61 կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար խորհրդատվական աշխատանքներ: Նշված ծառայությունների գումարը կազմել է **2.200.0 հազ. դրամ**:

2010թ. նույն ժամանակահատվածում խորհրդատվական աշխատանքներ է կատարվել 55 կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար և այդ ծառայությունների գումարը կազմել է **2.314.0 հազ. դրամ**:

2011թ. 1-ին եռամսյակում ինստիտուտն իրականացրել է 51 տեխնիկական պայմանների և 42 տեխնիկական պայմանների և դրանցում փոփոխությունների փորձաքննության աշխատանքներ՝ **2720.0 հազ. դրամ**ի:


Գծանկար 2. Տեխնիկական պայմանների փորձաքննության աշխատանքներից ստացված 1-ին եռամսյակի գումարային դինամիկան, հազ. դրամ



2011թ. 1-ին եռամսյակում գրանցվել է 51 տեխնիկական պայմաններ և 12 տեխնիկական պայմանների փոփոխություն:

2011թ. 1-ին եռամսյակում ինստիտուտն իրականացրել է ստանդարտների վաճառք << կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին՝ 80 ստանդարտ՝ 475.0 հազ. դրամի:

Գծանկար 3 - ՀՀ կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին ստանդարտների վաճառքի գումարային դինամիկան, հազ. դրամ



«Ստանդարտ» տեղեկատվական որոնման համակարգի արդիականացման նպատակով բաժնի կողմից համակարգչի միջոցով իրականացվել է ազգային ստանդարտների տվյալների բազայի մուտքագրում: 2011 թ-ի 1-ին եռամսյակում մուտքագրվել է էլեկտրոնային բազայում Հայաստանի Հանրապետությունում գործողության մեջ դրված 24 ազգային ստանդարտների մատենագիտական տվյալները:

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության գործատուներին և մասնագետներին սպառիչ տեղեկատվություն ապահովելու համար նախապատրաստվել է հրատարակման համար «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» 2010- N 4 եռամսյակային տեղեկատու, ինչպես նաև N 1, N 2 տեղեկատվական թերթիկները: Բաժինը կատարել է համապատասխան աշխատանքներ 2011թ. N1 «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» տեղեկատու նախապատրաստելու ուղղությամբ:

2. Փորձարկման լաբորատորիաներ

Ինստիտուտում գործում են 6 հավատարմագրված փորձարկման լաբորատորիա:

Երևանի փորձարկման լաբորատորիայում կատարվել է 278 փորձարկում և տրվել է 278 փորձարկման արձանագրություն:

Երևանի նավթամթերքի փորձարկման լաբորատորիայում ընդունվել է 224 հայտ և տրվել է 224 փորձարկման արձանագրություն:

Ֆիզիկաքիմիական փորձարկման լաբորատորիայում 1-ին եռամսյակում ընդունվել է 30 հայտ և տրվել է 30 փորձարկման արձանագրություն:

Ռադիոէլեկտրական սարքավորումների 1-ին եռամսյակում ընդունվել է 35 հայտ և տրվել է 35 փորձարկման արձանագրություն:


Գյումրու փորձարկման լաբորատորիայում ընդունվել է 121 հայտ և տրվել է 121 փորձարկման արձանագրություն:

Վանաձորի փորձարկման լաբորատորիայում 1-ին եռամսյակում ընդունվել է 74 հայտ և տրվել է 78 փորձարկման արձանագրություն:

ՓԼ-ների առջև խնդիր է դրված տանել աշխատանքներ փորձարկման ծավալների ավելացման ուղղությամբ: Այդուհանդերձ, ներկայումս նկատվում է փորձարկման ծավալների անկում՝ կապված սերտիֆիկացման ծավալների նվազման հետ:


Առկա խնդիրներից է ստանդարտ և քիմիապես գերմաքուր նյութերի ձեռքբերման հարցը:

Գծանկար 4 - Ինստիտուտի հավատարմագրված լաբորատորիաներում կատարված փորձարկումների քանակական դինամիկան 2010 թ.-ի 1-ին եռամսյակի համեմատ



Գծանկարներ 4 և 5-ում ներկայացված է Ինստիտուտի փորձարկման լաբորատորիաների կողմից 2010-2011թթ. 1-ին եռամսյակում իրականացված փորձարկումների քանակական և գումարային դինամիկան, որոնք վկայում են ծավալների անկման մասին:

Գծանկար 5 - Ինստիտուտի հավատարմագրված լաբորատորիաներում կատարված փորձարկումների գումարային դինամիկան 2010 թ.-ի 1-ին եռամսյակի համեմատ, դրամ



3. Համապատասխանության հավաստում

Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտի կազմում հավատարմագրված սննդի և պարենային հումքի, ոչ պարենային ապրանքների, ծառայությունների և կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինները շարունակել են իրականացնել համապատասխանության հավաստման աշխատանքներ: Ինստիտուտի սերտիֆիկացման մարմինների գործունեության ծավալներն ամենախոշորն են հանրապետությունում՝ համեմատած մյուս մարմինների գործունեությանը: Այսպես, հաշվետու ժամանակաշրջանում տրվել են՝

ա) ոչ պարենային ապրանքների և ծառայությունների սերտիֆիկացման գծով տրվել են՝

- 369 համապատասխանության սերտիֆիկատ,
- 183 համապատասխանության հայտարարագիր,
- 64 ծառայությունների սերտիֆիկատ


Համապատասխանության հսկողություն է իրականացվել 4 կազմակերպություններում:

բ) սննդի և պարենային հումքի գծով տրվել են՝

- 281 համապատասխանության սերտիֆիկատ,
- 128 համապատասխանության հայտարարագիր,

Համապատասխանության հսկողություն է իրականացվել 15 կազմակերպությունում, ընդունվել են դադարեցման և կասեցման 7 որոշումներ:

Գծանկար 6 - Ինստիտուտի սերտիֆիկացման մարմինների կողմից տրված սերտիֆիկատների քանակական դինամիկան 2010 թ.-ի 1-ին եռամսյակի համեմատ



4. Կառավարման համակարգերի սերտիֆիկացում

2011թ. I եռամսյակում ընդունել է որակի կառավարման համակարգերի սերտիֆիկացման 7 հայտ, որից մեկը մերժվել է, մեկում իրականացվել է սերտիֆիկացում, իսկ հինգը գտնվում են ընթացքում, որոնց համար կատարվել են փաստաթղթային վերլուծություն: 6 կազմակերպությունում իրականացրել է որակի կառավարման համակարգերի և 2 կազմակերպությունում՝ էկոլոգիական կառավարման համակարգերի համապատասխանության հսկողություն:

Ինստիտուտի գլխավոր մասնագետ, աուդիտոր Ն.Ամիրբեկյանը 2011թ. փետրվարի 28-ից մարտի 4-ը մասնակցել է Մինսկում (Բելոռուսի Հանրապետություն) ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման Միջպետական խորհրդի (այսուհետ՝ ՍՀՍ ՄՊԽ) 38-րդ նիստի որոշման համաձայն իրականացվող «Արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում ԱՊՀ երկրների մրցանակաբաշխության II փուլի մասնակիցների գնահատման համար փորձագետների որակավորման» ուսումնագործնական սեմինարին:

Ինստիտուտի 2 աուդիտորներ ընգրկվել են արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում Անկախ Պետությունների Համագործակցության երկրների III Մրցանակաբաշխության փորձագետների ռեեստրում և իրականացրել են համապատասխանաբար «Մոլդչնի Միր» ԲԲԸ, «Դերժինսկիու Ագրոկոմբինատ» ՓԲԸ, «Վիննիցիայի Մասլոժիռ կոմբինատ» ԲԲԸ և «Վեգաս» ՍՊԸ, «Ռոմգիլ» մասնավոր

տրիկոտաժի ձեռնարկություն», «Պերմի գիտահետազոտական սարքաշինական ընկերություն» ԲԲԸ ընկերությունների փաստաթղթային փորձաքննություն՝ ներկայացնելով հաշվետվություն ԱՊՀ երկրների Ստանդարտացման բյուրո:

Ներկայումս Ինստիտուտի կողմից աշխատանքներ են տարվում՝

ա) կազմակերպությունների էկոլոգիական կառավարման համակարգերի սերտիֆիկացման աշխատանքների ակտիվացման և համապատասխան իրազեկության ապահովման ուղղությամբ,

բ) բաժնի աշխատակիցների որակավորման բարձրացման ուղղությամբ՝ նրանց միջազգային չափանիշներին համապատասխանող դասընթացներին մասնակցության ու ԻՌԿԱ-ում որպես աուդիտորներ գրանցման միջոցով:

5. Ուսումնական կենտրոն

Հաշվետու եռամսյակում ՀՀ 17 կազմակերպությունից ստացված նամակների և հայտերի համաձայն՝ 46 հայտատուից ձևավորվել է ունկնդիրների 5 և նախադիպլոմային պրակտիկա անցկացնող ուսանողների 1 խումբ, որոնց համար կազմակերպվել է համապատասխան ուսուցում, վերապատրաստում, տեղեկատվական նյութերի և փաթեթների տրամադրում: Դասընթացներն անցկացվել են արդիական ինտերակտիվ միջոցներով ու մեթոդներով (սլայդների ցուցադրում, թեսթեր, գործնական խաղեր, առաջադրանքներ, իրավիճակների վերլուծություններ և այլն): Վերապատրաստումը գնահատվել է թեսթավորումների միջոցով, որոնց արդյունքներով ունկնդիրներին հանձնվել են վկայականներ՝ սահմանված կարգով գրանցելով գրանցամատյանում:

Առաջին եռամսյակում Կենտրոնում անցկացվել է ընդամենը 226 դասաժամ:

Հաշվետու եռամսյակում վերանայվել և արդիականացվել են համապատասխանության գնահատման ոլորտում փորձագետների որակավորման հարցաշարերը: Կազմակերպվել է փորձագետների որակավորման 1 թեսթավորում և 1 հարցազրույց, որին մասնակցել են ՀՀ 3 կազմակերպությունից 5 հավակնորդ: Համապատասխանության գնահատման բնագավառում փորձագետների որակավորման հանձնաժողովի որոշմամբ ՀՀ 2 կազմակերպության 3 հավակնորդի հանձնվել է տարբեր ոլորտների փորձագետի 8 վկայագիր՝ սահմանված կարգով գրանցելով Ստանդարտների ազգային ինստիտուտի էլեկտրոնային կայքում և գրանցամատյանում:

Սահմանված կարգով և հաղորդակցության տարբեր միջոցներով ՀՀ կազմակերպությունները պարբերաբար տեղեկացվել են Կենտրոնում կազմակերպվող դասընթացների և միջոցառումների մասին:

Առաջնահերթություններին դասելով ՀՀ բուհերի հետ կապը և համագործակցությունը՝ Կենտրոնն իրականացրել է մասնավորապես Երևանի պետական համալսարանի, Հայաստանի պետական տնտեսագիտական և Հայաստանի պետական ագրարային համալսարանների համապատասխան ֆակուլտետների դասախոսների և ուսանողների իրազեկում Կենտրոնի ծրագրերի և նախաձեռնությունների մասին:

2011թ-ի գործունեության ծրագրի համաձայն Կենտրոնի ղեկավարը անցկացրել է Հայաստանի պետական ագրարային համալսարանի պարենամթերքի տեխնոլոգիաների ուղղությամբ մասնագիտացող ուսանողների և համապատասխան ամբիոնի դասախոսների համար իրազեկման թրեյնինգ՝ նվիրված որակի կառավարման համակարգերի ԻՍՕ 9000 շարք ստանդարտներին և սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգերի ԻՍՕ 22000 շարք ստանդարտներին:

Կենտրոնում առկա են հետևյալ խնդիրները.

- Կենտրոնի անձնակազմի համալրում մասնագետ -թրեյներներով, որոնք պետք է տիրապետեն թրեյնինգների միջազգայնորեն ընդունված գործիքներին, մեթոդներին, կանոններին,
- միջազգային թրեյներների միջոցով Կենտրոնի անձնակազմի իրազեկում թրեյնինգների փորձին և նորամուծություններին,
- Կենտրոնի ճանաչման և վարկանիշի բարձրացման նպատակով տարբեր ոլորտների ունկնդիրների համար տեղեկատվական սեմինարների, քննարկումների սկիզբ դրված գործընթացների շարունակում,
- ունկնդիրների պահանջարկի և առաջարկների, գնահատականների հիման վրա թրեյնինգների ուսումնամեթոդական բազայի կատարելագործում,
- էական մասնակցություն ՀՀ-ում մրցունակ մասնագետների ձևավորման գործընթացին. ՀՀ բուհերի հետ աշխատանքների ակտիվացում, ընդհուպ սեփական փորձարարական բազայի օգտագործմամբ և ոլորտի փորձառու մասնագետների ներգրավմամբ մագիստրանտական ուսուցման կազմակերպում,
- Կենտրոնի բոլոր գործընթացների շարունակական բարելավում:

6. Ինստիտուտի հիմնական գործունեությանն առնչվող այլ աշխատանքներ

ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2011 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 55-Ա հրամանով հաստատված նոր կառուցվածքի և հաստիքացուցակի համաձայն՝ 2011 թվականի առաջին եռամսյակում աշխատանքից ազատվել են 17 աշխատող, որոնցից 2-ը՝ դիմումի համաձայն, իսկ 15-ը՝ գործատուի նախաձեռնությամբ: Հաշվետու եռամսյակում Ինստիտուտն աշխատանքներ է իրականացրել կադրային ու փաստաթղթաշրջանառության գործունեության կազմակերպման ոլորտում, ինչը կապված էր ընկերության վերակազմավորման աշխատանքների հետ:

Ներկայումս աշխատանքներ են տարվում բոլոր հաստիքների նոր պաշտոնեական հրահանգների և բոլոր ստորաբաժանումների գործունեության կանոնակարգերի մշակման ուղղությամբ:

Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրենը 2011թ. հունվարի 24-25 մասնակցել է ԻՍՕ-ի Խորհրդի ռազմավարական հարցերով մշտական հանձնաժողովի 30-րդ նիստի աշխատանքներին:

Ստանդարտների ազգային ինստիտուտի (ՍԱԻՄ) տնօրենը 2011թ. մարտի 17-18 ք.ժնկում (Շվեյցարիա) մասնակցել է ԻՍՕ-ի Խորհրդի հերթական 89-րդ նիստի աշխատանքներին:

Ստանդարտների ազգային ինստիտուտի (ՍԱԻՄ) փոխտնօրենը 2011թ. ապրիլի 4-5 ք.ժնկում (Շվեյցարիա) մասնակցել է ԻՍՕ-ի Ինստիտուցիոնալ հզորացման ծրագրի մեկնարկին նվիրված սեմինարին: Այդ ծրագրով ընտրվել է 16 զարգացող երկիր, որոնց ստանդարտացման ազգային ինստիտուտները պետք է ենթարկվեն ԻՍՕ-ի փորձագետների համակողմանի ուսումնասիրությանը և կատարվի կարիքների գնահատում: ԱՊՀ երկրներից ընտրվել են Հայաստանը, Ուզբեկիստանը և Ադրբեջանը: